

Օրինակ 2

Արամը և Գոռը հարևաններ են: Երկուսի այգիներն էլ ունեն նույն մակերեսը և կառուցվածքը: Յուրաքանչյուր շաբաթ նրանք կարգի են բերում իրենց այգիները: Արամն իր այգու խոտածածկը կարողանում է կտրել 10 րոպեում, իսկ ծաղիկները՝ 30 րոպեում: Գոռն ավելի դանդաղ է կատարում իր աշխատանքը: Նա կտրում է իր այգու խոտածածկը 50 րոպեում, իսկ ծաղիկները՝ 40 րոպեում:

	Խոտածածկ	Ծաղիկներ	Խնայելու ժամանակահատված
Արամ	10	30	
Գոռ	50	40	
Տարբերություն	40	10	=30

Արամը կարողանում է ավարտել իր այգու աշխատանքները 40 րոպեում, իսկ Գոռը՝ 90 րոպեում: Առաջին հայացքից թվում է, թե փոխանակումն այս դեպքում չի կարող տեղի ունենալ, քանի որ Արամը կարողանում է ն՝ խոտածածկը, և՛ ծաղիկները կտրել ավելի արագ, քան Գոռը: Իրականում երկուսն էլ կարող են շահել փոխանակման արդյունքում: Եթե Արամը զբաղվի միայն խոտածածկերը կտրելով, նա կծախսի 20 րոպե ժամանակ՝ խնայելով 20 րոպե: Գոռն իր հերթին կկտրի ծաղիկները՝ ծախսելով 80 րոպե: Այսինքն՝ նա կխնայի 10 րոպե:


Օրինակ 3

Տիգրանը և Արթուրը, ելնելով իրենց ռեսուրսներից և տեխնիկական միջոցներից (արտադրական հնարավորություններից), արտադրում են երկու տեսակի գինիներ՝ սև և սպիտակ: Տիգրանը, ելնելով իր արտադրական հնարավորություններից, կարողանում է արտադրել կամ 100 լիտր սպիտակ կամ 50 լիտր սև գինի կամ էլ դրանց այլ համակցություն: Այդ բոլոր համակցությունները կարելի է պատկերել արտադրական հնարավորությունների կորի միջոցով: Այն

Համակարգ

տնտեսական վերլուծական-տեղեկատվական կենտրոն

ցույց է տալիս գինիների այն բոլոր համադրությունները, որոնք Տիգրանը կարող է ստանալ՝ օգտագործելով իր բոլոր ռեսուրսները:



Արթուրը կարողանում է արտադրել կամ 40 լիտր սև գինի, կամ 30 լիտր սպիտակ գինի: Այստեղ նույնպես թվում է, թե Տիգրանը կարիք չունի համագործակցել Արթուրի հետ և նա ավելի արդյունավետ է աշխատում: *Սակայն ավելի շատ արտադրելու ունակությունը դեռևս չի նշանակում ավելի բարձր արդյունավետություն:* Մենք պետք է համեմատենք՝ ինչը պետք է զոհաբերել ինչ-որ բան ստանալու համար: Այլ կերպ ասած՝ պետք է համեմատենք սև և սպիտակ գինիների այլընտրանքային ծախսերը Տիգրանի և Արթուրի մոտ:

Ենթադրենք Տիգրանը որոշել է արտադրել միայն սպիտակ գինի: Նրա ծախսն այդ դեպքում կկազմի 50 լիտր սև գինի: Յուրաքանչյուր 1 լիտր սպիտակ գինի արտադրելու համար նա զոհաբերում է 0,5 լիտր սև գինի: Այսինքն՝ 1 լիտր սպիտակ գինին նրա համար հավասար է 0,5 լիտր սև գինուն:

Արթուրը որոշել է արտադրել միայն սև գինի: Նրա ծախսը կկազմի 30 լիտր սպիտակ գինի: Այսինքն՝ 1 լիտր սև գինին նրա համար հավասար է 0,75 լիտր սպիտակ գինուն:

Տիգրանը կունենա 100 լիտր սպիտակ գինի, իսկ Արթուրը 40 լիտր սև գինի: Եթե նրանք փոխանակեն 1:1 հարաբերակցությամբ 30 լիտր գինի, ապա Տիգրանը կունենա 70 լիտր սպիտակ և 30 լիտր սև գինի: Արթուրը կունենա 30 լիտր սպիտակ և 10 լիտր սև գինի: Ստացվում է երկու կողմերն էլ շահում են: Արթուրը կունենա լրացուցիչ 10 լիտր սև գինի, իսկ Տիգրանը՝ գինիների այնպիսի հարաբերակցություն, որը դուրս է նրա արտադրական հնարավորություններից (եթե հաշվի առնենք, որ 1

Համակարգ

տնտեսական վերլուծական-տեղեկատվական կենտրոն

լիտր սև գինի = 2 լիտր սպիտակ գինի, ապա Տիգրանը կունենա 130 լիտր սպիտակ գինուն համարժեք գինիների հարաբերակցություն):

